



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ՈՐՈՇՈՒՄ**

N 552 - Ա

25 հոկտեմբերի 2021 թ.

**«ԳԱՎԱՌԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՒՅՐ ԿՈՒՌՈՅԱՆԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ  
ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ  
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ  
ՀԱԿՈՐ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Պարույր Կուռոյանի 2021 թվականի հոկտեմբերի 20-ի Մ-20787-2021 գրությունը որոշում եմ՝

1. «Գավառի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Պարույր Կուռոյանի ժամանակավոր անաշխատունակության պատճառով, 2021 թվականի հոկտեմբերի 19-ից «Գավառի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունների և պարտականությունների իրականացումը, մինչև Պարույր Կուռոյանի աշխատանքի մեջ համարվելը, ժամանակավորապես վերապահել «Գավառի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության բուժական գծով տնօրենի տեղակալ Հակոբ Հովսեփյանին /առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ/:

25.10.2021



ԿԱՐԵՆ ՍԱՐԳՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ      Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՅԱՆ  
ք. Գավառ